

Արքեպիսկոպոս Սիւրմէեան իր «Պատմութիւն Հայկալի Քահանայից» շահեկան շարքին մէջ երկար կը խօսի «Տէր Սարգիս քհնյ. Հալէպցի»ի մասին⁵⁾: Հոն կը վկայուի, որ «ականազոր» Տէր Սարգիսի աշխարհական անունը եղած է Մուրատ, ունեցած է «սիլվազան» յորջորջումը: Մնած է 1592-ին տոննները եւ 65 տարեկան մեռած է 1662 Սեպտեմբեր 3-ին: 1635-ին Իզմիր է եղեր, ուրիշ անցեր է Կիւղէլ Հիսար ու հոն քահանայ է ձեռնադրուեր Տէր Տրդատ Արքեպիսկոպոսէ եւ դարձեալ Իզմիր է վերագարձեր, ուր դրեր է Մինիան (Բժշկարան) մը, գոր յունիս 10-ին աւարտեր է Պոճա Աւետիք Զուգայեցիի համար:

Իր մանկութեան, ծնողաց եւայլնի մասին տեղեկութիւն կը պակասի: Արտաւազդ Սրբազան չէ կրցած գտնել նոյնիսկ Տէր Սարգիսի գերեզմանը:

Սիլվազան կամ «սիւքէղէն» կը նշանակէ «գրամահատ», որով կ'երեւայ թէ Հայկալի Օսմանեան արքունի տեղական փողերանոցին գրամներուն քանդակը պատրաստողն էր: Այսպէս, ան կ'երեւայ իրր լեզուազէտ, բժշկութեան հետեւող, ականազէտ, գոհարագործ, ոսկերիչ, գրամահատ եւ նոյնիսկ տաղասաց ու գրիչ, որմէ, սակայն, մինակ տաղեր ու բժշկական ձեռագիր մը հասած են մեզի լաւ ու գործունեայ համրաւի մը անորոշ արձագանգին հետ:

Չեմ գիտեր թէ կարելի⁶⁾ է հայ գոհարավաճառներու շարքին դասել Մարկոս Ըոզազը, որ Մատրասի մօտ Բորթուկալեան Մալափուռ (կամ Սր. Թովմա) քաղաքին կառավարիչն էր ժէ. դարու կիսուն: Այսուհանդերձ այս հայազգի Մարկոս Ըոզազը 1664-ին սկիզբները Անգլիոյ Չարլզ Բ. Թագաւորին մեծարժէք գոհարներ նուէր կը զրկէ՝ յուսալով անկէ ձեռք բերել արտօնութիւն Անգլիաչէն նաւ մը ունենալու:

Ահա զրկուած նուէրներուն ցանկն ու նկարագրութիւնը. — «Մատանի մը կապոյտ, խոշոր քարով, ուրիշ մըն ալ խոշոր ոսկեգոյն

յակինթով. ուրիշ մատանի մը վերը յիշուածէն աւելի փոքր կարմիր յակինթով. Պահրէյն (Պարսից ծոցին մէջ կղզի մը՝ Յ. Ք.) մարգարիտ մը, ակնահաճոյ պատուական կարմիր յակինթ մը ոսկեկուռ ընդելուցեալ. լանջքին վրայ կրուելու գոհար մը որ կարելի է մասերու բաժնել ըլլալով գոհար մը երեք կապոյտ եւ ձերմակ շերտով, դարձեալ մեծագոյն քար մը, որ նոյնիսկ բնիկներուն կարծիքով բացառապէս խոշոր է եւ խիստ նման կարկեսանի: Բոլոր ասոնք ի մի հաւաքուած են ոսկիէ տուփի մը մէջ կնքուած եւ հոս իսկ գործածած եմ ստորագրութեամբս կը նուիրեմ եւ Ձեր գերիշխանութեան ոտքերուն տակ կը դնեմ»: 6)

Յաւալի է, որ Մարկոս Ըոզազի մասին առ այժմ աւելի բան մը չենք գիտեր, ինչպէս որ մութի մէջ է Մալափուռի, բայտ երեւոյթին, բարդաւած եւ հին հայ գաղութին պատմութիւնը:

Նոր Զուգայեցի հայ գոհարավաճառներուն ստիպուած ենք տալ առիւծի բաժինը մեզի ծանօթ Թանկազին քարերու հայ վաճառականութեան պատմութեան: Աշուղ Բազէր Օղլին կը գրէ.

Ողջ սահար շրուհան. ջուհայիր շնաս
Գոված այս սմարն ասնափն Զուղու: 7)

Որուն Թարգմանութիւնն է՝
Ամէնքն ալ հանճարամիտ են, գոհար ճանչցող.
Գովուած են միջնորդք, արհեստաւորք Զուգայի:

Նոր Զուգայեցի արհեստաւորի եւ միջնորդի մասին հետաքրքրական վկայութեան մը կը հանդիպինք «Բագմավէպ»ի 1843 թիւ 2 (15

6) «Հայք ի Հարաւային Հնդկաստան» — Ս. Տէր Մ. Գրիգորեան, Վենետիկ, 1922, էջ 9-11: Տե՛ս նաեւ «Պոջայական Կապիտալ», — Լէ. Պետհրատ, Երեւան, 1934, էջ 86-87: Նաեւ Armenians in India. — by Mesroby J. Set, Calcuta, 1937, էջ 604-606:

7) «Պատ. Նոր Զուգայու» — Յարութիւն Թ. Տէր Յովհաննեանց, Նոր Զուգայ, 1880, Ա. մաս, էջ 165:

5) «Բագմավէպ», 1939, էջ 14: